

6.

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
HISTORY

ИСТОРИЧЕСКИЕ НАУКИ

ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԳԱՎԱՌԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ

Հ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԳԴՀ պատմության ամբիոնի վարիչ*

Հայաստանի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի վրա վիթխարի ազդեցություն է թողել Առաջին համաշխարհային պատերազմը: Հայ իրականության մեջ գործող գրեթե բոլոր քաղաքական կուսակցությունները (Հայ հեղափոխական դաշնակցություն, Հնչակյան, Հայ ժողովրդական) և կազմակերպությունները (մենչևիկներ, էսեռներ, սպեցիֆիկներ) պատերազմի առաջին իսկ օրերից պաշտպանելով ցարական կառավարության քաղաքականությունը պատերազմում, կոչ էին անում վերջ տալ սոցիալ-դասակարգային ամեն տեսակի տարածայնություններին և համախմբել ուժերը հակառակորդին հաղթելու համար: Նման մոտեցումը հենվում էր այն գիտակցության վրա, որ հայ քաղաքական ուժերը, հասարակական կազմակերպությունները և ընդհանրապես հայ ժողովուրդը մեծ հույս էին կապում Ռուսաստանի և նրա դաշնակից տերությունների հետ, համոզված լինելով, որ նրանց հաղթանակը թուրքիայի հանդեպ, ազատություն կբերի արևմտահայությանը:

Քաղաքական ուժերի հիմնական մասը, վերանայելով և նոր իրադրության ոգում հարմարեցնելով իրենց ծրագրերը, ջանացին կարելիության չափով մասնակցություն ունենալ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի բանակների հաղթանակի գործում: 1915 թ. հուլիսի 3-ին Հայ հեղափոխական դաշնակցության օրգան «Հորիզոն» թերթը «Մենք էլ լարենք մեր ուժերը» վերտառությամբ խմբագրական հոդվածում գրում էր. «Ժամանակը չէ՞, որ մենք էլ հետևենք ուժեղների օրինակին և ընդհանուր սպառազինման դիմելով հա-

մախմբենք գործի ընդունակ բոլոր տարրերը, առանց դասակարգային խտրականության»¹:

Այս տեսակետից բացառություն կազմեցին հայ բուլշևիկները: Նրանք պատերազմի տարիներին հետևելով իրենց ռուս կուսակիցների օրինակին՝ պատերազմում չափանդորեն չսատարեցին Ռուսաստանի կառավարությանը: Անկախ քաղաքական ուժերի միջև առկա տարածայնություններից Անտանտի տերությունների հաղթանակին հայ ժողովուրդը տրամադրեց իր կենսունակ ուժերը, ինչպես ասվել է, հուսալով ռուսական զորքերի օգնությամբ Արևմտյան Հայաստանը ազատել թուրքական բռնատիրությունից:

Ռուսական կայսրության մեջ բնակվող 2 մլն. 54 հազ. հայերը ցարական բանակին տվեցին մոտ 250 հազ. զինվոր, որը կազմում էր արևելահայերի 13%-ը²: Հայ ժողովուրդը Ռուսաստանին և նրա դաշնակից երկրներին օգնեց նաև կամավորներով:

Ռուսական զենքի շնորհիվ Արևմտյան Հայաստանը ազատագրելու գաղափարը համակել էր նաև Նոր Բայազետի գավառի հայությանը: Տիրող ընդհանուր մթնոլորտին լայնորեն անդրադարձել է ժամանակի մամուլը: Պատերազմի սկսվելուց մեկ շաբաթ անց «Մշակ» թերթում տպագրվեց նորբայազետցի Գ. Սինանյանի «Ժողովրդի համակրությունը Նոր Բայազետում» խորագիրը կրող հոդվածը: «Հուլիսի 25-ին պատերազմի առիթով տեղիս ժողովուրդը հայրենասիրական-համակրական ցույց կազմակերպեց՝ ի պատիվ Ռուսաստանի և նրա բարեկամ պետությունների: Նախ փակվեցին բոլոր շուկաները, և ժողովուրդը խռնվելով ծխական դպրոցի առաջ՝ մեծ բազմությամբ, դրոշակներ պարզելով՝ անցավ դեպի... քաղաքային այգի, ուր ռուս և հայ հոգևորականությունը հանդիսավոր մաղթանք կատարեց Թագավոր Կայսրի արևշատության և ռուսաց զենքի զորության համար»³: Թերթի հայտնած տեղեկության համաձայն արտասանվեցին ճառեր, որոնք արտահայտում էին հայ հասարակության բուռն ցանկությունը՝ աջակցել Ռուսաստանի զինվորության մարտական գործողություններին: Այս ամենից, գավառապետ Ֆիլիպովը խիստ զգացված շնորհակալություն է հայտնում հայ հասարակությանը՝ իր բուռն համակրությամբ⁴»- եզրահանգում է թերթի թղթակիցը:

Մեկ այլ թղթակցությամբ Սևանա վանքի հոգևոր սպասավոր Աստվածատուր վարդապետը իրազեկում է, որ բանակ կանչված հայ պահեստավորները

¹ «Դորիզոն», 3 հուլիսի 1915, թիվ 146:

² «Հայ ժողովրդի պատմություն», Եր., 1981, հ. VI, էջ 547:

³ «Մշակ», 31 հուլիսի 1914, թիվ 184:

⁴ Նույն տեղում:

մեծ թվաքանակով շարունակ գալիս էին Սևան՝ երկրպագելու մասունքներին և խնդրելու վանահոր⁵ օրհնությունը: Նրանց տրամադրությունը չափազանց բարձր էր, քանզի գիտակցում էին, որ գնում են պատերազմ իրենց նվիրական պարտքը հայրենիքի և ժողովրդի հանդեպ կատարելու⁶:

Այս գիտակցումը նրանց ուղեկցեց ողջ պատերազմի ընթացքում և ավելի ուժգնորեն դրսևորվեց Անդրկովկասի անկախացումից հետո: Որպես ասվածի ապացույց վկայակոչենք Նոր Բայազետի գավառի Ազգային խորհրդի նախագահ Պետրոսյանի հոդվածը, որ տպագրել է «Հորիզոն» թերթը 1918 թ. ապրիլի 23-ի համարում: «Շնորհիվ տեղական բոլոր հեղափոխական և հասարակական կազմակերպությունների եռանդուն աջակցության, զինակոչը անցնում է հաջող, ամեն օր երիտասարդների էշելոններ է գնում: Քաղաքը մեծ ոգևորություն է ցույց տալիս հայրենիքի և հեղափոխության նվաճումների պաշտպանության գործում: Ոգևորությունը տարածվել է շրջակայքում և ամբողջ գավառում»⁷:

Նկատի ունենալով այս ամենը՝ հակված ենք կարծելու, որ 1918 թ. հուլիսի 20-ին Թիֆլիսի Հայոց ազգային և Երևանի ազգային խորհուրդների համատեղ նիստում ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանի հնչեցրած գնահատականը. «...իսկ ամենահայաշատ շրջան Նոր Բայազետը դավաճանորեն չմասնակցեց (խոսքը Սարդարապատի ճակատամարտի մասին է-Հ.Հ.) որևէ կերպ: Եվ այդ գավառի պատմությունը ապագա պատմագիրը սև տառերով պիտի գրի»⁸, - ասված է խիստ և ոչ տեղին: Եթե, ըստ Ա. Մանուկյանի, Նախիջևանն իր աշխարհագրական դիրքի շնորհիվ ստիպված էր իր զորամասերը պահել տեղում և չմասնակցել նշված ճակատամարտին, ապա Նոր Բայազետի գավառն էլ, մուսուլման բնակչության պարագայում, պարտադրված էր ուժերը կենտրոնացնել նրանց անջատողական ձգտումները ճնշելու համար: Անշուշտ, մենք հեռու ենք այն մտքից, թե պատերազմի տարիներին, առավել ևս 1918-1920 թթ. Նոր Բայազետի գավառից դասալիքներ չեն եղել, սա այն դեպքում, երբ բանակում դասալքություն կոչվածը ընդունել էր չափազանց

⁵ Վանահայրը Սարգիս եպիսկոպոս Փիլոյանն էր: Ծնվել է 1852 թ. Նոր Բայազետում: 1901 թ. Սկրտիչ խորհրդի կաթողիկոսի ձեռնաք ստացել է եպիսկոպոսի աստիճան: Զբաղվել է նաև գրական գործունեությամբ: Նրա գրչին են պատկանում «Կորած մարգարիտ», «Սևանի պատմությունը», «Սովերք», «Զրույցներ բնական պատմությունից» (թարգմանություն) և արձակ այլ ստեղծագործություններ: Վախճանվել է 1915 թ. հոկտեմբերի 15-ին, 63 տարեկան հասակում: Տե՛ս «Հորիզոն», 27 հոկտեմբերի 1915, թիվ 273:

⁶ «Հորիզոն», 29 հուլիսի 1914, թիվ 163:

⁷ Նույն տեղում, 23 ապրիլի 1918, թիվ 75:

⁸ «Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս)», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2009, էջ 153:

մեծ չափեր: Չնայած ձեռնարկված կանխարգելիչ բազում միջոցառումներին, Հայաստանի բանակում դասալքությունը մնաց որպես ամենահիվանդագին և կործանարար երևույթներից մեկը: Բավական է նշել, որ 1919 թ. վերջին դասալիքների թիվը Հայաստանի Հանրապետությունում կազմում էր 17665 մարդ, որից Նոր Բայազետի գավառում՝ 2840 մարդ⁹ կամ 16%:

Հատկանշական է, որ հայությունը բացի զինապարտներից պատերազմին մասնակցեց նաև կամավորներով: Պատերազմի սկզբից Հայաստանում և նրա սահմաններից դուրս մեծ թափ ստացած հայկական կամավորական շարժումը լայն արձագանք ստացավ նաև քննության առարկա գավառում: Նոր Բայազետ քաղաքում ստեղծվել էր առանձին կոմիտե, որը հավաքագրում էր կամավորներին: Ջենքի ընդունակ բնակչությունը ինքնաբերական ցուցակագրվում էր կամավորական խմբերում: Նոր Բայազետից 1914 թ. դեկտեմբերին «Հորիզոն» թերթին գրում են, որ ռուս-թուրքական պատերազմը մեր քաղաքում և գյուղերում ևս առաջ բերեց մեծ ոգևորություն: Շրջանից առայժմ գնացել են 50 կամավորներ¹⁰:

Բազմաթիվ սկզբնաղբյուրներ հավաստում են, որ պատերազմի դաշտ մեկնած գավառցիները ռուսական Կովկասյան բանակի և հայ կամավորական ջոկատների շարքերում բացառիկ անձնագոհությամբ են մարտնչել թշնամու դեմ, ակտիվորեն մասնակցել Արևմտյան Հայաստանի բազմաթիվ բնակավայրերի ազատագրմանը:

Հայ զինվորների մի ստվար մասը, որոնց մեջ քիչ չէին նաև Նոր Բայազետի գավառից զորակոչվածները, հերոսաբար մարտնչեցին նաև Արևմտյան ռազմաճակատում Թուրքիայի դաշնակից գերմանո-ավստրոհունգարական բանակների դեմ ծավալված պատերազմական գործողություններին¹¹:

«Մշակ», «Հորիզոն» և այլ թերթեր հաճախակի իրենց էջերում տպագրել են Արևմտյան ռազմաճակատից գավառի տարածաշրջանի զինվորների նամակները՝ հասցեագրված հարազատներին: Հատկապես շատ են գերության մեջ հայտնված, ինչպես նաև Մոսկվայի, Պետրոգրադի և Ռուսաստանի այլ քաղաքների հիվանդանոցներում ապաքինվող վիրավոր ու հիվանդ զինվոր-

⁹ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 199, ց. 1, գ. 29^ա, թ. 348: Դասալքության մասին մանրամասն տես Վ. Վիրաբյան, «Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը 1918-1920 թթ.», էջ 148-190:

¹⁰ «Հորիզոն», 2 դեկտեմբերի 1914, թիվ 269:

¹¹ Տես «Մշակ», 15 նոյեմբերի 1914, թիվ 259, 29 հուլիսի 1915 թիվ 163:

ների մամակաները: Նրանցից ոմանք իրենց կարողությունը արտահայտելուց բացի, փող են խնդրել ծնողներից՝ անձնական կարիքների համար¹²:

Ռուսական բանակի հաղթանակների հետ Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցը կապելու պատրանքը հերոսական ու անձնուրաց աշխատանքի մղեցին արևելահայ զանգվածներին նաև թիկունքում:

Ռազմաճակատ մեկնածների փոխարեն աշխատանքային հերթափոխի կանգնեցին կանայք, ծերերը, պատանիները, հիվանդներն ու հաշմանդամները:

Անձնական միջոցներից հայ զինվորներին օգնելը դարձավ թիկունքում մնացածների ինքնաբերական պարտականությունը: Այդ գործին իր ներդրումն ունեցավ և Նոր Բայազետի գավառի հայությունը: 1914 թ. սեպտեմբերին ԿՀԲԸ-ի Նոր Բայազետի տեղական մասնաճյուղի նախաձեռնությամբ տեղում հիմնվեց Պահեստի զինվորների ընտանիքներին օգնող մասնախումբ¹³: Նույն տարվա սկզբին, դարձյալ Նոր Բայազետում ստեղծվեց կանանց կոմիտե¹⁴ (այլ աղբյուրներում՝ ընկերություն)¹⁵ և օրիորդների խումբը: Դրանք լույս աշխարհ եկան ԿՀԲԸ-ի տեղական մասնաճյուղին կից: Կազմակերպություններն իրենց լիազորություններով մեծապես կախված էին ԿՀԲԸ-ից և ղեկավարվում էին նրանից ստացած հրահանգներով:

Համընդհանուր շարժման այս վերելքի մթնոլորտում 1914 թ. նոյեմբերի 15-ին Նոր Բայազետում հիմնվում է «Հասարակական գործիչների ազգային կոմիտե» անունով մի կազմակերպություն: Կոմիտեի հիմնադիրները քաղաքի ուսյալ և առաջադեմ մտավորականներն էին, որոնք լավագույնս գիտակցում էին գավառի բնակչության առջև ծառացած մեծ ու փոքր հիմնախնդիրների հրատապ լուծման կարևորությունը: Հատկանշական է, որ քաղաքի մերձակա գյուղերի աչքի ընկնող մտավորականները եղել են այս կոմիտեի ակտիվ գործիչներ: Կոմիտեի կազմավորումից հետո սկսվեց պահեստագործի զինվորներին ու կամավորներին, ինչպես նաև նրանց ընտանիքներին օգնելու անմախաղեպ շարժում, զարկ տրվեց բնակչությունից հանգանակությանը, առանց որի հնարավոր չէր լուծել վերոգրյալ խնդիրները: Կոմիտեի կազմակերպած խմբերը սկսեցին բնակչությունից հանգանակություն անել: Խմբերը հանդիպեցին լուրջ դժվարությունների՝ կապված այդ աշխատանքը մեկ կենտրոնից կազմակերպելու և ղեկավարելու հետ¹⁶: Խնդիրը կարգավորելու փորձեր են

¹² «Մշակ, 29 հուլիսի 1915, թիվ 163:

¹³ «Հորիզոն», 2 դեկտեմբերի 1914, թիվ 269:

¹⁴ Նույն տեղում, 6 դեկտեմբերի 1914, թիվ 273:

¹⁵ Նույն տեղում, 27 հունիսի 1915, թիվ 142:

¹⁶ Նույն տեղում, 5 դեկտեմբերի 1914, թիվ 279, 27 հունիսի 1915, թիվ 142:

արվել: Կազմակերպությունը 1914 թ. նոյեմբերի 27-ին դիմում է նահանգային իշխանությանը և իրազեկելով նրան ստեղծված իրավիճակի մասին՝ հարց է բարձրացնում Նոր Բայազետի գավառը գործնականում բաժանել առանձին շրջանների, ինչի շնորհիվ կոմիտեի անդամները համոզված էին, որ խնդիրը դյուրին լուծում կստանա:

Խնդրանքը բավարարվում է: Նոր Բայազետի մտավորականներից Լ. Պետրոսյանի տեղեկացմամբ գավառը բաժանվում է 8 շրջանների: «Յուրաքանչյուր շրջանում, -գրում է «Հորիզոն» թերթը,- մտադրություն կա ժողովրդավարություն սկսել հոգուտ պատերազմ զնացած զինվորների և ընդհանրապես արծազանքելու պատերազմից առաջ եկած կարիքներին» և հավելում՝ համոզվածություն կա, որ գավառի Բասարգեշար, Քեռլադրամ, Ներքին Ղարանլուղ, Երանոս, Ալափարս, Ներքին Ախտա, Ռնդամալ և Ցամաքաբերդ գյուղերը զգալի աջակցություն ցույց կտան թե՛ փողով, և թե՛ իրեղեններով¹⁷:

Վերոնշյալ կատեգորիայի բնակչության կարիքները հոգալու համար, նույն տարում նահանգի իշխանությունները, սույն գավառում կյանքի կոչեցին նոր կոմիտե, որին անդամակցեցին գավառապետը, քաղաքապետը, գործակալը, մի քանի պաշտոնյաներ ու վաճառականներ: Կոմիտեն գլխավորապես զբաղվում էր պետական նպաստը պահեստի զինվորներին և նրանց ընտանիքներին բաժանելով¹⁸:

Պահեստի զինվորներին և նրանց ընտանիքներին օգնելու հասույթը բացի վերը նշված աղբյուրներից՝ հանգանակություն և պետական նպաստ, գոյանում էր նաև բնակչության մվիրատվությունից: Պետական նպաստից հետո սա իր կարևորությամբ երկրորդ աղբյուրն էր:

Նվիրաբերում էին ամենքը, ով ինչ կարող էր: Բնակչության ունևոր խավը կատարում էր հիմնականում դրամական մվիրատվություն: Օրինակ, 1914 թ. երկրորդ կեսին մվիրատվության ճանապարհով հավաքվել էր 1133 ռուբլի, որը օգնության կարգով բաժանվեց 110 ընտանիքների՝ դաշտային աշխատանքները կատարելու համար: Ստորև բերված է մվիրատուների ցուցակը: Տեղի մեշչենական (քաղաքային դասի) գանձարկղից՝ 200 ռ., Դ. Խաչատրյան՝ 100 ռ., Ս. Բաղդասարյան, Խ. Թորգոմյան և Քոչարյան եղբայրներ՝ 50-ական,

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում, 2 դեկտեմբերի 1914, թիվ 269:

Խ. Բունիաթյան, Վ. Արևշատյան, Ռ. Ավետիսյան՝ 35 ռ., Գ. Բատիկյան, Խ. Չիբուխյան և Ղլեշյան՝ 20-ական ռ., թվով ավելի քան 70 մարդ¹⁹:

Ինչպես ասվել է, հասույթի «պակասավոր» մասը լրացվում էր բնակչության հանգանակության միջոցով: Մեր միտքը հաստատելու համար մեծաքանակ փաստերից հիշատակենք մի քանիսը: Նոր Բայազետ քաղաքի բնակչությունից հանգանակած դրամով գնված կտորեղենից կարվեց 87 կտոր տաք հագուստ, 35 զույգ ականջակալ, 200 զույգ գուլպաներ և ուղարկվեց կամավորականների²⁰: Մինչ այդ Բասարգեչարից արդեն 500 զույգ գուլպա ուղարկվել էր ըստ պատկանելության²¹:

1914 թ. դեկտեմբերի 7-ին Ներքին Ախտայի վաճառականները հասարակության ժողով հրավիրեցին դպրոցի շենքում և որոշեցին հանգանակություն բաց անել հոգուտ հայ կամավորների: Հանգանակությունը լինելու էր կանոնավոր ամսավճարով և տևելու էր մինչև պատերազմի վերջը: Ընտրվեց երկու մարմին՝ մեկը հավաքելու էր վաճառականների ամսավճարը, իսկ մյուսը՝ հանգանակություն պետք է աներ Ներքին Ախտայի գյուղացիներից²²:

Բնակչությունից հանգանակություն անելու արդյունավետ ձև էր այսպես կոչված դրոշակների վաճառման ակցիաների հաճախակի կազմակերպումը:

Ընդ որում՝ դրանում իրենց ինքնաբերական սասնակցությունն էին բերում ոչ միայն բնակչության ունևոր դասի ներկայացուցիչները, այլ նաև ստորին զանգվածները: Այլ խոսքով՝ նախաձեռնությունը լայն տարածում է ստանում: Ահա ցայտուն մի օրինակ: 1915 թ. մայիսի 16-ին Նոր Բայազետում նշանակվել էր դրոշակներ վաճառելու օր: Քաղաքի բնակչության բոլոր խավերը, անկախ ֆինանսատնտեսական հնարավորություններից, ակտիվ մասնակցություն ունեցան այդ միջոցառմանը: Այս առնչությամբ քաղաքագլուխ Վահան Աֆրիկյանը «Նոր Բայազետի կինը մեր օրերում» խորագրով հոդված տպագրեց «Հորիզոն» թերթում՝ մասնավորապես նշելով, որ «դրոշակների վաճառման» օրը նորբայազետցի կինը մեծ թափով ասպարեզ եկավ թե՛ քաղաքում և թե՛ գյուղում: Նրանք խումբ-խումբ շրջում էին, իսկ տներում եղած կանայք ընդունում էին նրանց ուրախությամբ և նվիրում ով ինչ կարող էր: Մի կին իր մեջքի արծաթյա գոտին տվեց, ասելով, որ «սրանից ավելի բան չունեն տալու»²³ և այս կնոջ դեպքը եզակի չէր: Այս կապակցությամբ ուշադրություն են գրա-

¹⁹ «Մշակ», 30 սեպտեմբերի 1914, թիվ 218, «Հորիզոն», 1 հոկտեմբերի 1914, թիվ 216:

²⁰ «Հորիզոն», 5 դեկտեմբերի 1914, թիվ 272:

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում, 16 դեկտեմբերի 1914, թիվ 281:

²³ «Հորիզոն», 27 հունիսի 1915, թիվ 142:

վում հրապարակման մեջ տեղ գտած հետևյալ տողերը. «Փողոցում մի կին է կանգնած ծայրը դողալով հարցնում է՝ էդ ինչի համար եք հավաքում, կամավորների, լսվում է խմբի միջից: Սպասեք, կանչում է կինը և նստում ծյան վրա, հանում ոտքից գուլպաները, հագնում մաշված չուստերը և տալիս ասելով. «էլ ոչինչ չունիմ տալու, էս իմ ջուխտ գուլպաներն են, ուղարկեք թող հագնի իմ ախպերներից մեկը»²⁴:

Գավառում հաճախակի է տեղի ունեցել «դրոշակների օր»: Օրինակ, 1914 թ. նոյեմբերի 12-ին Նոր Բայազետում կազմակերպվեց այդպիսի մի օր, որից ստացվեց 1145ռ. գումար²⁵:

Այսպիսով՝ արևելահայությունը, նրա կազմում և Նոր Բայազետի գավառի հայ բնակչությունը, աչքի առաջ ունենալով «բանտարկված» հայրենիքի ազատագրման սրբազան պարտքը, ինչպես ռազմի դաշտում, այնպես էլ թիկունքում անձնագրի գործունեությամբ որոշակի ներդրում ունեցավ Համաձայնության պետությունների տարած հաղթանակի գործում: Ցուցաբերած հերոսության և խիզախության համար նրանցից շատերի կուրծքը զարդարվեց մեդալներով ու շքանշաններով: 1916 թ. հունվարի 3-ին «Հորիզոն» թերթը գրում էր, որ կռվող զինվորը հերոսությամբ է կատարել իր պարտքը: Դրա ամենափայլուն ապացույց կարող են ծառայել այն բազմաթիվ անգրագետ ու գրագետ գավառցի (Նոր Բայազետի գավառ — Զ.Զ.) զինվորները, որոնց կուրծքը զարդարված է բազմապիսի շքանշաններով, առավել ևս Ս. Գեորգի խաչով²⁶: Հողվածագիրը վկայակոչում է իր պնդումն ապացուցող մի ծանրակշիռ փաստ. «Ինչպես չիիմանալ, տեսնելով իր քաջությունների համար նորբայազետցի Տիգրան Զարգարյանի ստացած Ս. Գեորգի 3 խաչերը»²⁷:

Բանալի բռնեք - Հայ հեղափոխական դաշնակցություն, Նոր Բայազետի գավառ, Արևմտյան Հայաստան, պահեստի զինվորներ, գավառ, Առաջին համաշխարհային պատերազմ, ռուսական կայսրություն

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում, 2 դեկտեմբերի 1914, թիվ 269:

²⁶ Նույն տեղում, 3 հունվարի 1916, թիվ 2:

²⁷ Նույն տեղում:

УЧАСТИЕ АРМЯН ПРОВИНЦИИ НОР БАЯЗЕТ В ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЕ

Г. М. АРУТЮНЯН

*Доктор исторических наук, профессор,
заведующий кафедрой истории ГГУ*

Армянский народ и его политические силы единогласно поддержали в Первую мировую войну имперскую Россию до победного конца, с осознанием того, что победа России и ее союзников над Турцией принесет свободу „арестованной“ родине.

По свидетельству многих источников, ушедшие на фронт тысячи солдат-срочников и добровольцев из провинции Нор Баязет самоотверженно боролись на Кавказском фронте против Турции, а на Западном фронте - против стран союзников.

Связав иллюзию освобождения Западной Армении с Россией, армян Нового Баязета побудил на героическую самоотверженный труд в тылу.

PARTICIPATION OF ARMENIAN PEOPLE OF NOR BAYAZET IN THE FIRST WORLD WAR

H. M. HARUTYUNYAN

*Doctor of Historical Sciences, Professor,
Head of GSU Chair of History*

The Armenian people and its political powers unanimously supported imperial Russia to finish the first World War believing that the victory of Russia and its allies over Turkey will bring freedom to the “imprisoned” motherland.

As a lot of sources prove, thousands of soldiers and volunteers leaving for the battlefield from Nor Bayazet province have fought with unique self-denial against Turkey in Caucasus front and against its allies in the Western Front.

The illusion that victory of Russia will liberate Western Armenia, led to heroic self-denying activities of the Armenian people in Nor Bayazet in the rear as well.